

## ՕՂԻ = ԱՐԱՂ, ԲԱԳԸ

Տեղական արտադրութիւն, խաղողի մնացորդներէն թորուած ու գորաւոր ոգելից ըմպելի մըն էր օղին որ ընդհանրապէս տուներու մէջ որպէս դեղ կը պահուէր ու ալքօհոլի տեղ շփելու կը գործածուէր:

Օղին կը գործածուէր տօնական օրերու, յուզարկաւորութեան ու բացօթեայ վայրեր, էլպիզի ջուրի եղերքին խրախճանքի առիթներով:

## ՕՂԻԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Խաղողը հնձանին մէջ քամուելէ վերջ, մնացեալ Շիւր (կեղեւն ու կուզկապերը) կ'առնուէր կարասներու մէջ ու վրան ջուր կը լեցուէր: Առանց շաքարի շիւր կը քացիէր ու կը քրքրուէր վերածուելով գորաւոր ալքօհոլի քիտնուրդի մը:

Փորձառու կանայք դիտէին պատեհ ժամանակը (թաւ), բայց վստահ ըլլալու համար քիչ մը շիւր կը լեցնէին սրճեփին մէջ ու եռացնելէ վերջ վառած լուցկին կը մօտեցնէին անոր գոլորշին: Երբ բռնկէր, ըսել էր թէ տառն էր թորանոց (Ըրախլըգ) տանելու:

Ժամանակը անցած շիւր բոլորովին անպէս կը դառնար:

Ըրախլըգի մէջ ալքօհոլը կը թորուէր ու համեմուելով կը դառնար օղի:

Օղին հանուած տաք շիւր իբր դեղ կը գործածուէր ոտքի մատերը մայաալքէ քերուող անձերու կողմէ:

## ՕՂԻԻ ԹՈՐԱՆՈՑ = ԸՐԱԽԼԸԳ

Խաղողը առատ մեր շրջաններուն մէջ բնականաբար պիտի զարգանային զայն օգտագործելու միջոցները: Ատոնցմէ մէկն էր օղի հանելու կաթսան:

Հանրութեան ծառայող հաստատութիւն մըն էր այս ալ, մասնաւորապէս չինուած ու գիտական վերջին ձեւերով սարքաւորուած:

Պղինձէ անոսվոր կաթսայի մը մէջ կը լեցնէին շիւր, տակը կը վառէին ու կափարիչը կը կնքէին խմորով:

Կաթսային մէկ ծայրը աստիճանաբար նեղնալով խողովակաձեւ կ'երկարէր բարձրադիր առուակի մը մէջէն ուրկէ մօտակայ աղբուրի ջուրը կը հոսէր անընդհատ:

Շիւր կ'եռար, ալքօհոլի գոլորշին կ'անցնէր խողովակի մէջէն ու պաղ ջուրի ազդեցութեան տակ խտանալով հեղուկ վիճակի մէջ